

ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատ (Արմավիր) համայնքի 2016թ – ի համայնքի

ղեկավարի տարեկան հաշվետվություն

1. Գործավարություն.

2016թ – ի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 43 դիմումներ և առաջարկություններ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները: Համայնքի բնակիչներին տրամադրվել են 807 հատ տեղեկանքներ, բնութագրեր: Հղվել են 90 հատ պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների ղեկավարներին: Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 53 որոշում: Արձակվել է 14 կարգադրություն:

2. Ավագանու գործունեություն.

2016թ – ի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 6 հերթական և 4 արտահերթ նիստ: Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի համար խիստ հրատապ հարցերի քննարկման և լուծումներ տալու համար, մասնավորապես կատարվել է փոփոխություններ և լրացումներ համայնքի 2016 թվականի բյուջեում: Հաստատվել է համայնքի 2017 թվականի բյուջեն, հաստատվել է մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույթաչափերը: Սահմանվել է 2017 թվականի ընթացքում տեղական տուրքերի և վճարների դրույթաչափերը: Ավագանու քննարկմանն են ներկայացվել է 24 դիմումներ և ստացել իրենց համապատասխան լուծումները:

3. Գյուղատնտեսության ոլորտ.

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու ցանքերն են.

բնակավայրային նշանակության հողեր – 140 հա.

գյուղ. նշանակության հողատարածք – 329.5 հա, որից

խաղողի այգի – 56.7 հա

պտղատու այգի – 82.0հա

2016թ – ի կատարվել է 91 հա. հացահատիկի, լոբու, 23 հա., կարտոֆիլի 18 հա.,

բոստանային կուլտուրաների 24 հա., վարունգի 16 հա., լոլիկի 26 հա., սեղանի ճակնդեղ 1 հա.,

սոխի 21 հա., և այլ բանջարեղենի 11 հա., եգիպտացորենի 15 հա., առվույտ 34 հա., կաղամբի

2 հա., սմբուկի 11 հա. ցանքեր:

Անասնազլխաքանակ.

խոշոր եղջերավոր անասուններ – 656 գլուխ, որից կովեր՝ 197 գլուխ

մանր եղջերավոր անասուններ – 2524 գլուխ ոչխար, որից մայրեր՝ 2235

395 խոզեր, որից մայրեր՝ 69

մեղվարնտանիք – 636

թռչուններ – 5595

2016 թվականին կատարվել է 200 հա. ցրտահերկ, ցանվել է 35 հա. ցորեն:

4. Հողի հարկ և գույքահարկ.

2016թ – ին համայնքային բյուջեով նախատեսվել է 8170.7 հազար դրամ հողի հարկ:

01.01.2017թ. դրությամբ համայնքի հողօգտագործողներից գանձվել և մուտք է արվել

համայնքի բյուջե 5237.6 հազար դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի տարեկան հողի հարկի 64.1% - ը:

Գույքահարկը բյուջեի եկամտային մասով նախատեսվել է 5162.1 հազար դրամ:

01.01.2017թ – ի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 4088.4 հազար դրամ,

որը կազմում է տարեկան գույքահարկի 79.2% - ը: 2016 թ– ի բյուջեով նախատեսվել է 820.0

հազար դրամ տեղական տուրքեր և վճարներ: 01.01.2017թ – ի դրությամբ գանձվել և մուտք է

արվել համայնքի բյուջե 579.0 հազար դրամ, որը կազմում է տարեկան 70.6% : 2016 թ– ի

բյուջեով նախատեսվել է 481. 0 հազար դրամ հողի վարձավճար: 01.01.2017թ – ի

դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 377.8 հազար դրամ, որը կազմում է

տարեկան 78.5% : 2016 թ – ի բյուջեով պետության կողմից տարվա ֆինանսական

համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան կազմել է 32463.3 հազար դրամ, որը

ֆինանսավորվել է 100% - ով: 2016թ – ի բյուջեում սեփական եկամուտները նախատեսվել է

14633.8 հազար դրամ: 01.01.2017թ - ի. դրությամբ սեփական եկամուտների փաստացի

մուտքերը կազմել են 10282.8 հազար դրամ: Սեփական եկամուտները կատարվել են 70.2 % - ով:

Ծախսեր.

Այգեշատի գյուղապետարանը 2016թ – ի հունվար ամսից առ 01.01.2017թ – ի դրությամբ կատարել է հետևյալ ծախսերը:

1. վճարվել է ընթացիկ աշխատավարձ – 24810.3 հազար դրամ
2. կատարվել է թերթի բաժանորդագրության ծախս – 30.0 հազար դրամ
3. մասնագիտական ծառայության համար փոխանցվել է - 97.5 հազար դրամ
4. փոխանցվել է էլեկտրոններգիայի գումար – 4562.6 հազար դրամ
5. փոխանցվել է գազի օգտագործման գումար – 367.5 հազար դրամ
6. միջոցառումների համար՝ մայիսի 28-ի, վերջին գանգի, բերքի տոնի և ամանորյա միջոցառումների համար նախատեսվել և կատարվել է ծախս – 300.0 հազար դրամ
7. մանկապարտեզին փոխանցվել է սուբսիդիա - 7297.0 հազար դրամ
8. նվիրատվություն է արվել շահույթ չհետապնդող կազմակերպություններին – 16.6 հազար դրամ
9. գրեմական պիտույքներ ձեռք բերելու համար փոխանցվել է - 738.1 հազար դրամ
10. անապահով ընտանիքներին ցուցաբերվել է դրամական օգնություն – 2300.0 հազար դրամ
11. մեքենաների և սարքավորումների ընթացիկ վերանորոգման համար կատարվել է ծախս – 388.0 հազար դրամ
12. ծաղիկ-ծաղկեպսակ ձեռք բերելու համար փոխանցվել է - 400.0 հազար դրամ
13. ինտերնետ կապի համար փոխանցվել է - 74.0 հազար դրամ
14. համակարգչային ծառայության համար փոխանցվել է - 78.2 հազար դրամ
15. հատուկ նպատակային նյութեր ձեռք բերելու համար փոխանցվել է - 570.3 հազար դրամ
16. աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնելու համար փոխանցվել է - 150.0 հազար դրամ
17. խմելու ջրի պոմպի վերանորոգման համար փոխանցվել է - 494.0 հազար դրամ:
- 18 այլ մեքենաներ և սարքավորումներ ձեռք բերելու համար փոխանցվել է - 480.0 հազար դրամ:

Ազգաբնակչություն.

ա) Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 2129 մարդ:

2016թ – ի ընթացքում Այգեշատ համայնքում ծնվել է 21 երեխա, գրանցվել է 18 մահ:

Ընտանեկան նպաստ ստացողներ 19 ընտանիք:

Համայնքում թոշակառուները 229 մարդ է:

5. Կրթություն և գիտություն.

Համայնքում գործում է մեկ դպրոց 198 աշակերտով: Մեկ մանկապարտեզ՝ հաճախող 54

երեխայով և 8 աշխատողով:

6. Մշակույթ.

Համայնքը ունի մեկ մշակույթի տուն 4 աշխատողով, գործող գրադարան 1 աշխատողով:

Մշակույթի տանը գործում է ազգագրական պարերի խումբ՝ 60 երեխաներով:

8. Զինակոչ.

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործուն աջակցությամբ պատշաճ կերպով կազմակերպվել է 2016թ-ի զինակոչը: Կատարվել է պլան առաջադրանքը:


9 . Միջոցառումներ և սոցիալական ոլորտ.

Պատշաճ կերպով նշվում են ՀՀ պետական տոները և հիշատակի օրերը: Պարբերաբար իրականացվում է գյուղի փողոցների աղբահանությունը: Անխափան իրականացվում է խմելու ջրի մատակարարումը: 2016 թվականի երկրորդ կիսամյանկում համայնքի փողոց 1-ի և փողոց 3-ի լուսավորության հարցը ամբողջությամբ լուծվել է:

10. Համայնքի հիմնախնդիրներ.

- ա) Համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքային նշանակության ճանապարհների և դաշտամիջյան ճանապարհների նորոգումը (հարթեցում, ավազապատում), որը կկազմի մոտ 20.000.000 ՀՀ դրամ
- բ) Վերանորոգման կարիք ունի նաև համայնքապետարանի շենքը, որի ծախսը կկազմի մոտ 25.000.000 ՀՀ դրամ
- գ) համայնքի հիմնախնդիրներից է նաև փողոցների լուսավորության հարցը, որի ծախսը կկազմի մոտ 20.000.000 ՀՀ դրամ
- դ) համայնքի հիմնախնդիրներից է նաև համայնքի նոր թաղամասերի գազաֆիկացման և էլեկտրոֆիկացման հարցը, որի համար կծախսվի մոտ 10.000.000 ՀՀ դրամ:

Այգեշատ /Արմավիր/ համայնքի ղեկավար՝



Ա. Մխիթարյան